

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
23.08.2020թ. կայացված ԱՖ448107 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<<22>> 09 2020թ. 7-13- 11721

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս,
վերանայելով Ռաֆիկ Թադևոսյանի ՄԴ/131412-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված
նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Արտաշատ քաղաքի Գոլեցյան փողոցի 28 տան բնակիչ Ռաֆիկ Թադևոսյանը դիմումով
խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ
գործով 23.08.2020թ. կայացված ԱՖ448107 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ որոշմամբ
արձանագրված իրավախախտման հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ
դիմումին ավելացնելու ոչինչ չունի և համաձայնվել է, որ դիմումը քննարկել առանց իր
մասնակցության և արդյունքների մասին տալ գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ
գործով 23.08.2020թ. կայացված ԱՖ448107 որոշումը ենթակա է կատարման հետևյալ
պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 123.3-րդ հոդվածի համաձայն՝
տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը
չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև
անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի
ուղևոր փոխադրելը առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն
աշխատավարձի տասնապատիկի չափով:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 24-
րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցի
վարորդը պարտավոր է կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով
կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս **լինել ամրակապված** և չփոխադրել
անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորների:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 23.08.2020թ. ժամը 16:50-ի սահմաններում Արտաշատ
քաղաքի Երևանյան փողոցում քաղաքացի Ռաֆիկ Թադևոսյանի վարած <<TOYOTA>> մակնիշի
91RT911 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության
ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 1-ին սպայական վաշտի 2-րդ սպայական դասակի տեսուչներ,
ոստիկանության կապիտան Է.Սաֆարյանի և ոստիկանության ավագ լեյտենանտ
Հ.Հովհաննիսյանի կողմից՝ <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման
մասին>> օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի պահանջի խախտման համար, այն է՝
վարորդն ավտոմոբիլը վարել է անվտանգության գոտիով չամրակապված վիճակում: Վարչական
իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 123.3-րդ հոդվածով կայացվել է վարչական
իրավախախտման վերաբերյալ գործով ԱՖ448107 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝ քաղաքացի Ռաֆիկ Թադևոսյանի կողմից կատարված իրավախախտումը հիմնավորող տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումն եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել ԱՖ448107 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե **ակնհայտ** կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ **երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:** Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 23.08.2020թ. կայացված ԱՖ448107 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռաֆիկ Թադևոսյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:



Ե. Վարապետյան